



# Ազդարարութեան

## Trumpet's Sound Վիոդ

50-ՐԴ ՏԱՐԻ, ԱԽՏՐԱՄԱՍ  
ՆՈՅԵՄԲԵՐ - ՌԵԿՏԵՄԲԵՐ 2019

«Որովհետեւ փողը պիտի  
հնչուի ու մեռելները  
յարութիւն պիտի առնեն  
առանց ապականութեան,  
մենք ալ պիտի փոխուինք»:

Ա Կորնթ. 15:52



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՄ ՓՈՂ»  
երկանուա հոգեւոր քերք

Պատասխանատու խմբագիր՝  
հովի Հրաշ Գոյցուճեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



### Տարեվերջին փառաբանութեան բազում Նիւթեր ուսինք Տերոջը մատուցելու:

- ACM-ը թէ՛ Յայաստանի եւ թէ՛ ամբողջ աշխարհի մէջ շատերու օրինութեան պատճառ դարձած է:
- Փա՛ռ տուէք Աստուծոյ 2019 թ.-ի միսիոնարական խումբի եւ Տերոջը դարձի եկած բազմաթիւ մարդկանց համար:
- Աղօթք Աստուածաշունչի սերտողութեան խումբերի համար, որոնք կ'օգտուին մեր գրականութիւննեն, քարոզչութիւննեն եւ ուսուցումներէն:
- Փա՛ռ տուէք Աւստրալիոյ, Յայաստանի եւ ԱՄՆ-ի մեր գրոծակիցներու, կամաւորներու եւ տնօրէններու համար:
- Կը Խնդրենք աղօթել, որ 2020 թուականը Տերոջը ծառայելու շատ առիթներ շնորհէ:

## Բովանդակութիւն

Չաքեռն .....	<b>3</b>
<i>Հովի Հրաշ Գոյցուճեան</i>	
Աստուծոյ տուած պարզեւերը (2) .....	<b>4</b>
<i>Ակրս Տիրապ</i>	
Այրող խրճիթը .....	<b>8</b>
<i>Քաղուած</i>	
Զօրութեամբ չէ, եւ ուժով չէ .....	<b>9</b>
<i>Հովի Հրաշ Գոյցուճեան</i>	
Խոնարի սկիզբը .....	<b>11</b>
<i>Հովի Հրաշ Գոյցուճեան</i>	
Դովտը Սոդոմի մէջ. ....	<b>14</b>
<i>Տնա Մրումք</i>	
Օրը օրին .....	<b>18</b>
<i>Քաղուած</i>	
Աստուծահաճոյ կաևայք. ....	<b>19</b>
<i>Առաջիկ Հովուու</i>	

## Զաքէոս

### Ղուկաս 19:1-10

**◀** արկահաւաք Զաքէոսի պատմութիւնը իհանալի պատմութիւն է: Այս հարուստ եւ կարճահասակ մարդը մաքսապէտ էր, միշտ մեծահարուստի պէս կը հազուէր, հպարտօրէն կը քայլէր, քայց ոչ ոքի կողմէ սիրուած չէր: Ոչ ոք չէր համիր հարկային դաշտին մէջ աշխատողներուն, եւ ան ընկերներ չունէր:

Յիսուսը Երիքովի մէջէն պիտի անցնէր: Զաքէոսը լսած էր Յիսուսի եւ Անոր ուսմունքի ու հրաշքներու մասին: Ան միշտ փափազած էր տեսնել զինք, քայց խնդիրը իր հասակն էր: Ան կարճահասակ էր. ամբոխի մէջ երէ մնար, պիտի չկրնար տեսնել զինք:

Զաքէոսը վճռական էր Յիսուսին տեսնելու: Ան արհամարհեց իր հըպարտութիւնը եւ չանհանգատացաւ իր շքեղ հազուստի կամ իրեն ծաղրող մանուկներու համար: Քանի որ իր միակ փափազը Յիսուսին տեսնելն էր, ան վազեց ու ժանտաքզենիի մը վրայ ելաւ, որպէսզի զանիկս տեսնէ: Կրնանք պատկերացնել, որ գուցէ վախցաւ ծառէն վայր իյնալ, կամ գուցէ ամուր գրկեց ճիւղը՝ սպասելով այդ յատուկ պահին:

Եւ ահա Ան: Հաւաքուած ամբոխը ցնծութեան ձայներ արձակեց, երբ Յիսուսը հորիզոնի վրայ տեսանելի եղաւ բոլորին: Զաքէոսը շատ ոգեւորուած էր: Ան իր գլուխը բարձրացուց, որպէսզի Յիսուսին տեսնելու առիթը յանկարծ բաց չձգէ: Ան չէր գիտեր, որ Յիսուսը զինք կը ճանչնար: Յիսուսը վեր նայեցաւ ու ըսաւ իրեն, որ անմիջապէս իշմէ, քանի որ այդ օրը պէտք է անոր տունը մնար: Ուստի անմիջապէս ծառէն իշաւ եւ ուրախութեամբ ողջունեց Տիրոջը:

Ես կը սիրեմ այս պատմութիւնը, քանի որ Յիսուսի կարիքը ունեցող մեղաւոր մարդու փրկութեան պատմութիւնն է: Ասսուածաշունչը կ'ըսէ. «Փնտռեցէք, եւ պիտի գտնէք»: Զաքէոսը իր ամբողջ սրտով կը փընտռէր, եւ այս պատմութեան զարմանալի մասն այն է, որ Յիսուսը զինք իր ամունով կամչեց: Այն, Յիսուսը գիտէ նաեւ ձեր անունը, քայց դրիք պէտք է զար Իր մօս՝ մէկդի դնելով ձեր հպարտութիւնը: Վազէք Իր մօս, ինչպէս Զաքէոսը ըրաւ եւ ըսէք. «Տէ՛ր, ես պարզապէս կ'ուզեմ Քեզ տեսնել»:

Այս սիրող Տէրը կ'ուզէ ձեր սրտին մէջ զալ, որպէսզի ձեզ հետ տօնակատարութիւն կատարէ: Գիտէ՞ք Տէրը ինչ ըստ Զաքենսին: Ան ըստ. «Այսօր այս տանը փրկութիւն եղաւ, քանզի ասիկա ալ Արքահամի որդի է: Վասն զի Որդին Մարդոյ եկաւ, որպէս զի կորսուածը վնասուէ ու փրկէ»:

Այո՛, Յիսուսն այսօր ներկայ է ձեզ համար, եւ ասիկա ձեր հնարաւորութիւնն է Իրեն ըսելու. «Տէ՛ր, որպէս մեղաւոր կուգամ եւ կ'ուզեմ Քեզ ունենալ կեանքին մէջ»:

Թող Աստուած օրինէ ձեզ:

Հ. Գ.

## **Աստուծոյ տուած պարզեւները**

### **Ա Կորնթացիս 12-րդ գլուխ (մաս 2)**

**Ա**հա Ա Կորնթացիս 12:4-7-էն քաղուած մի քանի անվիճելի փաստեր: Զկայ այնպիսի քրիստոնեայ մը, որը Սուրբ Հոգին զոնէ մէկ պարզեւ ստացած չ'ըլլայ:

Դուք Աստուծոյ Սուրբ Հոգին կողմէ եզակի եւ յատուկ պարզեւ ստացաք: Սուրբ Հոգին, ով օօրացուց Աստուծոյ վաղեմի հզօր տղամարդկանց ու կանանց, նոյն Հոգին է, որը ձեզ պարզեւ շնորհեց:

Քրիստոնեայ դառնալու օրը շատ զարմանալի բաններ պատահեցան ձեզ հետ.

- Դուք փրկագնուեցաք Քրիստոսի՝ խաչի վրայ կատարած փրկագործութեամբ:
- Ձեր մեղքերը ներուեցան:
- Դուք որդեգրուեցաք Աստուծոյ ընտանիքին մէջ, որպէս Իր շատ սիրելի զաւակ:
- Ձեր մէջ Սուրբ Հոգին բնակեցաւ եւ մշտապէս կնքուեցաք Իր կնիքով:

Ձեր կեանքի մնացած մասը պիտի անցնեք բացայայտելով այդ օրը

կատարուածի բոլոր հրաշալի հետեւանքները: Եթք քրիստոնեայ դարձաք, Սուրբ Հոգին ձեզի հիանալի պարզեւ մը եւ այն օրուառ կերպով օգտագործելու կարողութիւն տուաւ: Քրիստոսի Մարմնին մէջ անպիտան անդամներ չկան: Ասիկա կը նշանակէ, որ հոգեւոր պարզեւ ունենալը բացառիկ քրիստոնեայ ըլլալու նշան չէ, քանի որ բոլոր քրիստոնեաները առնուազն մէկ հոգեւոր պարզեւ ունին: Թերեւս զգաք, որ Սուրբ Հոգին յատուկ պարզեւ մը ունիք, սակայն անգամ մը եւս կ'ուզեմ շեշտել, որ այս պարզեւը կախուած չէ, թէ որոք ինչ կ'զգաք, այն իհմնուած է Աստուծոյ Խօսքի ճշմարտութեան վրայ:

Կան բազմաթիւ պարզեւներ, որոնք կը ներկայացնեն գործունեութեան տարբեր ոլորտներ:

Արժանիքինի մէջ ձեռքերը կորսնցուցած տղամարդու մը օրակոչեցին բանակ: Այնտեղ ան մօտեցաւ իր հրամանատարին ու հարցուց.

- Ես ի՞նչ օգուտ կրնամ բերել այստեղ:

Հրամանատարը պատասխանեց.

- Կը տեսնե՞ս այստեղ ջուր քաշող զինուորին, զնա՞ եւ լսէ՛ իրեն երբ դոյլը կը լեցուի. ան կոյր է:

Պողոսը կը շարունակէ իր միտքը՝ օգտագործելով մարդու մարմնի լրաբանումը: Ի՞նչ ընդհանուր կապ կայ աչքի ու ոտքի միջեւ: Ասոնք բոլորովին կը տարբերուին իրենց տեսքով ու նպատակով եւ ոչ մէկ ընդհանուր բան չունին, բացի այն, որ իրար կարիք ունին: Ոտքը կը սայթաքի, եթէ տեսնելու աչքը չըլլայ: Աչքը թիշ բան կը տեսնէ, եթէ ոտքը շարժման մէջ չ'գտնուի: Մարմնի ուժը կը կայանայ իր անդամներու տարբերութիւններու եւ ոչ թէ նմանութիւններու մէջ: Պարզեւներու մասին մտածելու ժամանակ մենք պէտք է յիշենք, որ իրարմէ կը տարբերուինք:

### **Զեր պարզեւը ձեզ համար չէ, այլ ընդհանուրի շահի համար է:**

Մարդու մարմնին մէջ չկայ անդամ մը, որը միայն իր շահի համար կը գործէ: Ասիկա շիասկնալը խոչընդոտ պիտի ստեղծէ ձեր կեանքին մէջ: Աստուած ձեզի պարզեւ տուած չէ ձեր կարիքը բաւարարելու համար: Զեր պարզեւը ուրիշներու համար է: Եթէ կը մտածէք, թէ ձեր ունեցած պարզեւը այնքան ալ հիանալի չէ, կամ աննկատելի է, ուրեմն որոք իսկապէս դժուարութեան մէջ էք: Այդպէս որոք ձեր պար-

գեւը կը բաղէք փոխանակ այն գործածելու, իսկ որիշները կը գրկուին ձեր ունեցած պարզեւի օրինութիւններէն: Դուք նաեւ զորկ կը մնաք Աստուծոյ կողմէն ձեզի տրուած կարողութիւնն օգտագործելու որախութիւնն: «Ամէն մէկուն զատ-զատ կը բաժնէ՝ ինչպէս կ'ուզ» (Ա Կորնթացիս 12:11): Աստուած լնարեց ձեզի տալ այն, ինչ տուած է, եւ այն ամբողջովին հաճելի է իրեն:

## **Ոչ մէկ պարզեւ համընդհանուր չէ**

Պօղոսը իրական վտանգ տեսաւ այն գաղափարախօսութեան մէջ, որ կան յատուկ պարզեւներ, որոնք իրաքանչիւր քրիստոնեայ պէտք է ունենայ: Ահա մի հետաքրքիր լուսաբանում.

Շատ-շատ տարիներ առաջ անտարի կենդանիները որոշեցին, որ պէտք է իմաստալից բան մը ձեռնարկեն աշխարհի խնդիրները լուծելու համար: Այսախով անոնք դպրոց մը կազմակերպեցին: Կազմեցին ուսումնական տարուայ դասացուցակը. վազք, ծառի մազլցում, լողալ եւ թռչել: Դասընթացը աւելի հեշտ դարձնելու համար բոլոր կենդանիները ընտրեցին դասացուցակի բոլոր առարկաները: Քաղը գերազանց լողաց: Իրականութեան մէջ աւելի լաւ լողաց, քան իր հրահանգիչը, բայց թռչելու գնահատականները հազիւ թէ բաւարար էին, իսկ վազքը՝ չափազանց ողբրմեի: Քանի որ դանդաղ էր վազքի մէջ, ան ստիպուած էր դպրոցի ժամերէն ետք մնալ այնտեղ՝ վարժութիւնը սորվելու համար: Վազքի վարժութիւններու պատճառով իր լայն ու տափակ ոտքերը սկսեցին մաշուիլ, այնպէս որ լողալու գնահատականներն ալ վատքարացան: Հազիւ թէ միջին գնահատական կրցաւ ունենալ: Սիջինը միանգամայն ընդունելի էր, ուստի ոչ ոք այդ մասին չէր մտահոգուած, բացի բաղը: Նապաստակը վազքի վարժութեան մէջ գերազանց ցուցանիշ ունեցաւ իր դասարանցիներու նկատմամբ, բայց ուսքի մկաններու խնդիրներ ունեցաւ, երբ չափազանց մեծ ջանք բափեց լողալու վարժութիւնը կատարելու ժամանակ: Ի վերջոյ, վազելու իր ունակութիւնը խիստ վատացաւ: Սկիուը հիանալի կերպով ծառը մազրլցեց, բայց թռչելու մէջ ձախողեցաւ: Արծիւը խնդրայարոյց աշակերտ էր եւ կարգապահական խիստ յանդիմանութեան ենթարկուեցաւ ոչ պատշաճ բնաւորութիւն դրսեւորելու համար: Ծառը բարձրանալու վարժանքի ժամանակ, ան միւս կենդանիներուն հրմշտկելով բարձրացաւ գագար:

Միտքը յստակ է.

- Եթէ բադ էք, ուրեմն լողացէք եւ մոռցէք վազելու մասին:
- Եթէ նապաստակ էք, ուրեմն վազէք եւ մի՛ փորձէք միանալ լողացողներու խումբին:
- Եթէ սկիւռ էք. ապա բարձրացէք. դուք երբեք չէք կրնար թռչիլ:
- Եթէ արծիւ էք, ապա թռչէք, դուք երբեք լաւ վազող չէք կրնար դառնալ:

Ծիշտ ասոր մասին կը խօսի Հռովմայեցիս 12:6-8-ը: Եթէ ձեր պարզեւը մարգարեանալն է, ուրեմն մարգարէացէք, եթէ այն՝ ուսուցանելն է, ապա ուսուցանէք, եթէ՝ տալն է, ապա տուէք, եթէ՝ առաջնորդելն է, ապա առաջնորդէք:

Երբ կը փորձեմք ըլլալ այն, ինչ չենք, ապա կը դանդաղեցնեմք ու կը խոչընդոտենք Աստուծոյ՝ մեզի տրամադրած պարզեւի գործածութիւնը: Երբ այդպէս կը պատահի, մենք կ'իյնանք հիասքափորեան, յուսահատութեան եւ նոյնիսկ յանցաւորութեան զգացումի մէջ: Աստուծ մեզ չստեղծեց այն մտադրութեամբ, որ բոլորին նոյն պարզեւը տայ, այլ՝ որ իրաքանչիրիս գոնէ մէկ պարզեւ տայ: Արդեօ՞ք կը զգաք, թէ շատ բան չունիք եւ ձեր ունեցած պարզեւը կարեւոր չէ: «Մանաւանդ մարմինին այն անդամները, որոնք շատ տկար կ'երեւնան, աւելի հարկաւոր են» (հմբ 22): Համարը չ'ըսէր, թէ այն անդամները, որոնք աւելի տկար կ'երեւնան աւելի օգտակար են: Այստեղ օգտագործուած բառը «հարկաւոր» բառն է: «Բոլոր մարմինը, մէկտեղ կազմուած եւ բոլոր յօդուածները իրարու հաղորդուելով կցուած՝ ամէն մէկ մասին շափով ներգրածելով՝ սիրով մարմնին աճում կու տայ իրեն շինութեանը համար» (Եփեսացիս 4:16):

Աստուծ ձեզի տուած է շատ աւելի, քան կը պատկերացնէք: Աստուծոյ՝ ձեզի տուած պարզեւի բացայայտումն ու օգտագործումը շատ կարեւոր է ողջ քրիստոնէական համայնքի համար:

Ուրա Տիրավ

\* \* \*

## Այրող խրճիթը

**Վ**աւաքեկումէ մը միայն մէկ ճամբորդ ազատեցաւ, որ շնչահեղձ պատիկ անմարդաբնակ կղզի մը ելաւ: Խե՞նձ մարդը, թեև ուրախ էր՝ ողջ մնալուն, բայց սրտանց աղօթեց Աստուծոյ, որ զինք ազատէ այս ամայի տեղէն եւ ամէն օր հորիզոնը կը քննէր, սակայն ո՛չ մէկ նաև կը տեսնէր: Յուսահատ եւ յոգնած վերջապէս որոշեց պատիկ խրճիթ մը շինել ջախջախուած նաւուն տախտակի կտորներով, որպէսզի ցերեկուան արեւէն եւ զիշերուան ցուրտէն պատսպարուի ու նաեւ ունեցած քանի մը առարկաները պահէ: Սակայն, օր մը, ուտելիքի փրնտրոտուքի վերադարձին, տեսաւ որ իր խրճիթը բոցերու մէջ կ'այրէր եւ սեւ ծովալ երկինը բարձրացած էր: Յոռեգոյնը պատահած էր: Ամէն ինչ ոչնչացած էր: Խե՞նձ մարդը բարկութեամբ եւ տիրութեամբ լեցուեցաւ: «Տէ՛ր Աստուած, ինչո՞ւ այս փորձանքը արտօնեցիր, որ գլուխս գայ», ըսաւ լալազին ձայնով: «Միթէ ա՞յս էր պակաս: Չի՞ բաւեր որ առանձին մնացած եմ այս կղզին վրայ, ուրկէ ազատելու ո՛չ մէկ միջոց ունիմ: Այս խրճիթը շա՞տ տեսար ինձի համար»: Ու սրտնեղած գլուխը քարի մը վրայ դրաւ ու քնացաւ:

Յաջորդ առտու կանուխ, նաւու մը սուլոցը արթնցուց զինք: Նախ կարծեց որ կ'երազէր, բայց երբ կրկին անգամ լսեց նոյն ձայնը, որ երբալով կը մօտենար իրեն անմիջապէս ծովափ վազեց եւ տեսաւ նաւ մը, որ զինք ազատելու եկած էր: «Ինչպէս զիտցաք որ ես հոս եմ», հարց տուաւ շուարած մարդը իր ազատարաներուն: «Մոլիսի նշանը տեսանք», պատասխանեցին նաւաստիները:

Իրապէս դիրին է յուսահատիլ, երբ ամէն ինչ սխալ կ'ընթանայ: Սակայն պէտք չէ յուսալքուիլ, քանի որ Աստուած ամէն ինչէ լուր ունի եւ Ան կը գործէ մեր կեանքին մէջ, նոյնիսկ ցափ եւ տառապանքի դժուար պարագաներուն մէջ: Յիշէ՛ որ յաջորդ անգամ, երբ խրճիթը իհմնայտակ կ'այրի... այդ կրնայ մոլիսի նշան մը ըլլալ, որ Աստուծոյ հրաշագործ միջամտութիւնը կը հրափրէ կեանքիդ մէջ: Մեզի հանդիպած բոլոր Ժխտական պատահարներուն մէջ, պէտք է զիտնանք որ Աստուած դրական պատասխան մը ունի:

Ուստի միշտ յիշենք, որ «Ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան՝ անոնց որ զԱստուած կը սիրեն» (Հոռվմ. 8:28):

## «Զօրութեամբ չէ, եւ ուժով չէ, հապա իմ Հոգւովս...»

### «Ազդարարութեան փող» թերթի 50-ամեակը



**Ի**նչափիսի՝ ուրախութիւն է ականատեսը ըլլալ այս սքանչելի ամսագրի կենաագրութեանը:

Մօտաւորապէս 15 տարի է, ինչ այս ամսագրի հիմնադիր Խմբագիրը գնաց Տերոց ներկայութեան մէջ ըլլալու, սակայն իր աղօքքներու եւ Աստուծոյ կամքի շնորհի գործը զարմանալի կերպով կը շարունակուի:

Այսօր ամսագիրը կը տպագրուի 4600 օրինակով ու կը տարածուի շուրջ 7 երկիրներու մէջ 3 լեզուներով՝ արեւելահայերէն, արեւմտահայերէն եւ անգլերէն: Այն հասանելի է նաև առցանց՝ մեր կայքէջի միջոցով ([www.acmaust.org](http://www.acmaust.org)): «Ազդարարութեան փող»-ը ազատօրէն կը բաժնուի Հայաստանի եւ Արցախի անէի քան 50 եկեղեցիներու: Անգլերէն ամսագիրը կազմուած է շորս Ա4 էջերէ, իսկ հայերէն տարբերակն ունի երկու լրացուցիչ էջ՝ մէշտեղը ունենալով նաև Աստուածաշունչի սերտողութեան թերթիկ, որը կարելի է ամսագրէն հանել ու առանձին պահել:

Ովքէ՞ր են ընդգրկուած եւ որո՞նց պէտք է շնորհակալութիւն յայտնել: Այս առիթէն օգտուելով կ'ուզենք մեր շնորհակալութիւնը յայտնել բոլոր անոնց, որոնք քրտնաշան կ'աշխատին այս ծառայութեան համար՝ յօդուածներ գրելով, թարգմանելով, սրբագրելով տպագրելով, տարածելու մէջ մեզ օգնելով կամ նիւթապէս օժանդակելով:

**Հայ քրիստոնէական միսիոնարութիւն.** այս առաքելութիւնը կը հովանաւորէ ֆինանսական ծախսերու հետ կապուած որեւէ պակասութիւն: **Խմբագիր.** Հովիչ՝ Հրաչ Գույուճեանը կը վերահսկէ ամբողջ աշխատանքը:

**Հայերէն ամսագիր.** Վարդան Եղբայր Սարգիսեանը, ով կեցած է այս ամսագրի ետին՝ նուիրելով իր ժամանակը թարգմանութեան, էջաղբընան, ձեւաւորման եւ ժամանակին թերթը տպագրատուն հասցնելու համար:

**Հայերէն ամսագրի սրբագրողներ.** շնորհակալ ենք արեւելահայերէն թերթի համար՝ Իդա Խաչատրեանի եւ Աննա Սարգիսեանի, իսկ արեւմտահայերէն թերթի համար՝ Վերժին Սարգիսեանի կատարած աշխատանքներէն:

**Անգլերէն ամսագիր.** այս աշխատանքը անհնար պիտի ըլլար առանց Տնն եւ Հելեն Մթորմըրներու օգնութեան: Մենք զարմացած ենք անոնց նուիրուածութիւններին:

**Աստուածաշունչի սերտողութեան դասընթացներ.** շնորհակալութիւն կը յայտնենք «Queensland mailbox club inc.»-ին իրենց դասընթացներն օգտագործելու բոյլտուութեան համար:

**Տպագրութիւն Սիտնիի մէջ.** շնորհակալութիւն կը յայտնենք «Industrial Printing Co.»-ին վերջին չորս տարիներու ընթացքին «Ազդարարութեան փող» թերթի տպագրութեան ծախսերը իր վրայ վերցնելու համար:

**Յօդուածագիրներ.** օրինուած ենք հաւատարիմ հաւատացեալ հեղինակներով, Խօսքի հովիներով եւ ուսուցիչներով, ովքեր իրենց ժամանակը կը նուիրեն Աստուծոյ Խօսքը, Աստուածաշունչեան վարդապետութիւն, վկայութիւններ, յոյսի եւ քաջալերական խօսքեր բերելով

Հովին՝ Արք Գոյութեանը  
Աստուածաշունչի սերտողութեան խոմքին  
հետ 1968 թ.-ին նառվ  
Աստրալիա զարթեսու  
ժամանակ:



մեզ՝ ամսագիրը դարձնելով չփրկուածներու համար լոյս եւ փրկուածներու համար՝ հոգեւոր սմունդ եւ սպեղանի:

**Քաշխում (Հայաստան եւ Արցախ).** շնորհակալ ենք Մարտուն Յարութիւնեան եղբօրը Հայաստանի եւ Արցախի մէջ ամսագիրը տարածելու համար:

**Փոստով բաշխում (Աւստրալիա).** Երախտապարտ ենք Շործ եւ Արշիկ Մոմարթիններուն, ովքեր կ'օգնեն մեզ՝ ամսագիրը աշխարհի վեց երկիրներու փոստով ուղարկելու մէջ (Ավստրալիա, ԱՍՆ, Գանատա, Ֆրանսա, Պուլկարիա, Հարաւային Ամերիկա):

**Մեր կոչումը.** ազդարարութեան փողը հնարաւորինս բարձր ու երկար հնչեցնելն է: Մենք կ'ուզենք պատրաստ ըլլալ Իր վերադարձին ու կը փափագինք, որ մեր բոլոր ընթերցողները միանան մեր խումբին, մինչ անհամբերութեամբ կը սպասենք յափշտակութեանը: Թող Տէրը օրինէ ձեզ բոլորիդ:

Եթէ մեր հաւատարիմ ընթերցողներէն մէկն էք, ապա կը խնդրենք պատմել մեզ, թէ ինչպէս է թերթը տարիներու ընթացքին օրինութիւն դարձել ձեզ համար:


Հ. Գ.

## Խոնար սկիզբը

Այսօր ինձի համար մեծ պատիւ ու առանձնաշնորհում է «Ազդարարութեան փող» թերթի 50-ամեակի կապակցութեամբ մի քանի տող գրելը: Այս ամէնը ոչ թէ մարդուն փառաբանելու համար է այլ Երկնաւոր Հօրը, որու ճամբաները մեր ճամբաները չեն: Մենք օրինուած ենք ականատեսը ըլլալով այս հրաշալի գործին:

Յուշերովս ետ կը վերադառնամ այն ժամանակ, երբ 50 տարի առաջ





գաղքեցինք Աւստրալիա: Այդ ժամանակը ընդամենը 14 տարեկան էի: Հայրս՝ հովի Արքօ Գույուծնանը նորեկ էր երկրին մեջ: Դժուար օրեր էին. ան ստիպուած պէտք է աշխատանք գտներ՝ վեց հոգանոց ընտանիքին խնամելու համար: Ան աշխատեցաւ շատ հայ գաղքականներու հետ Չարտուտի «Warburton Franki» տեղական գործարանին մեջ:

Օր մը հայրիկը տխուր տուն վերադարձաւ, քանի որ ճաշի ընդմիջման ժամանակը ընդամենը 30 վայրկեան էր, եւ ինք առիթ չէր կրնար գտնել Քրիստոսի մասն պատմելու կամ խօսելու միս գործարներու հետ: Մայրս, ով նոյնպէս կը սիրեր Տիրոջը, անմիջապէս արձագանքեց ըսելով. «Արքօ, ինչո՞ւ յօդուած չես գրեր ու անոնց բաժներ, որ կարդան»: Այդ գիշեր հայրիկը մինչեւ ուշ գիշեր արթուն մնաց հայերէնով ամբողջ Ա4 չափի թուղթի վրայ իր ձեռագրով Աստուծոյ սիրոյ եւ փրկութեան ճամբու մասին գրելով: Յաջորդ օրը այն տուաւ աշխատակիցներէն մէկուն, ով շատ քաջալերուեցաւ եւ ուրախացաւ այն ստանալու համար:

Դարձեալ ամբողջ էջ մը գրեց եւ յանձնեց մէկ ուրիշին, ով իրեն պատասխանեց ըսելով. «Դուք լաւ ձեռագիր ունիք, ինչո՞ւ չէք պատճենահաներ ձեր գրածները ու մարդկանց յանձներ»: Այսպիսով, հայրիկը 10 օրինակ պատճենահանեց իր գործընկերներուն տալու համար: Շուտով նաեւ սկսաւ փոստով ուղարկել աշխարհով մէկ տարածուած մի քանի ընկերներու, որոնցմէ մէկը խորհուրդ տուաւ իրեն, որ չնայած իր ձեռագիրը գեղեցիկ էր, սակայն աւելի լաւ կ'ըլլար, եթէ տպագիր մերենայով գրուէր այն: Հայրիկը ըսաւ, թէ չունի այդպիսի մերենայ եւ չի գիտէր ուրկէ կարելի է գնել հայերէն տառերով գրամեքենայ մը: Ի գարման իրեն, այս մարդը ուրախութեամբ գրամեքենայ մը ուղարկեց այս ծառայութեան համար: Գրամեքենան հասաւ հայրիկին ձեռքերուն մէջ եւ գիշերային աշխատանքը քառապատկուեցաւ:

Այն, ամէն գիշեր մեր քնիերզը այս գրամեքենայի կոճակներու հընչիններն էին՝ «քաք, թաք, թաք...», որը հայրս երբեմն մինչեւ կէսզիշեր մէկ մատով կը հաւաքէր: Իր մէկ էջանոց յօդուածը դարձաւ փոքրիկ

գրքոյի մը՝ «Ազդարարութեան փող» վերնագրով: Ան մինչեւ իր մահը հաւատարիմ մնաց իր ծառայութեանը:

Ան ամբողջովին հոգաց իրաքանչիր ամսուայ համար 400 օրինակով տպագրուած թերթին ծախսերը, անձամբ կազմելով թերթը՝ ծախսերը կրծատելու համար: Իր ձեռքով կը գրէր բոլոր հասցեները եւ փոստով կ'ուղարկէր 14 երկիրներ, իսկ 20 օրինակով՝ Խորհրդային Հայաստան:

Կը յիշեմ, երբ հիւանդ պառկած էր անկողնին մէջ, մեր ճաշասեղանը ամբողջովին յատկացուած էր ամսագրին, որը պէտք է դասաւորուէր, կազմուէր, ծրաբներու մէջ դրուէր ու փոստով ուղարկուէր, բայց ան չէր կրնար անկողնին քարձաբանալ: Ամէն օր անոր աշքերը սեղանին վրայ էին, ուստի նստեցի սեղանին մօտ եւ սկսեցի թերթերը պատրաստել փոստով ուղարկելու համար:

Մէկ ամիս անց ես գիտէի, որ ժամանակն է ամսագրի նոր տպագրութեան համար, այնպէս որ հօրս ըսի. «Հայրիկ, դուն շատ յօդուածներ ունիս տպագրութեան: Կրնա՞ն մի քանի հատ ընտրել, որպէսզի պատրաստեմ տպագրութեան համար»: Ան ըսաւ. «Որդի՞ս, ինչպէ՞ս պիտի ընես»: Այդ ժամանակ ACM-ի ծառայութիւնը արդեն սկսած էր Հայաստանի մէջ, եւ ես կը ճանչնայի Քրիստոսով եղբայր՝ Վարդանին: Ես հարցուի Վարդանին, թէ արդեօք կրնա՞յ օգնել այս ամսագրի ծառայութեան մէջ: Շուտով ձեռքս տպագիր օրինակ ունէի: Հայրս հրճուեցա՝ տեսնելով նոր տառատեսակները եւ վերնագիրը, բոլորը՝ ամբողջութեամբ նոր տեսքով:

Սենք շատ կը կարօտինք այս մարդուն, ով իր կեանքի 35 տարին նուիրեց, որպէսզի ուրիշները լսեն այս հիասքանչ Փրկչի նասին, ով մահացաւ աշխարհի փրկութեան համար:

Հ. Գ.



**Կ**ը շնորհաւորենք մեր Ընթերցողներուն Տեր Յիսուս Քրիստոսի ծնունդի կապակցութեամբ ու կը մաղթենք, որ 2020 թուականը օրինեալ տարի ըլլայ բոլորիդ համար: Նաեւ կը ֆաֆագինք, որ գալիք տարին ըլլայ Տեր Յիսուսի երկրորդ գալստեան տարին:

## Ղովտը Սոդոմի մէջ

### Ծննդոց 19-րդ գլուխ

**Ի** ՞ Երկրորդ նամակին մէջ (2:7-8) Պետրոսը Ղովտին մեր չ'ակնկալած ձեւով կը նկարագրէ. ան անոր մասին կը խօսի, որպէս արդար մարդու:

Սոդոմացիներու շրջանակին մէջ ապրելով՝ Ղովտը կը ճնշուէր անոնց անառակ վարմունքն: Անոր արդար հոգին կը տանջուէր օրէ օր տեսնելով ու լսելով անոնց անօրէն վարմունքը: Եթէ Պետրոսը չ'գրէր ասոր մասին, մենք երբեք պիտի զգիտնայինք, որ՝ Ղովտը արդար մարդ էր: Ի՞նչ պատահած էր այն մարդուն, ով Աքրահամի ընկերութիւնը վայելելու առանձնաշնորհումն ուներ: Ինչո՞ւ համար ան այսքան բարձր դիրքի վրայ էր՝ մէկը ով նստած է Սոդոմի նման չար քաղաքի դուռը:

### Ղովտը հանրային կեանքին մէջ

Աքրահամին այցելած երկու իրեշտակները իրիկուան դէմ ժամանեին Սոդոմ ու տեսան, թէ Ղովտը նստած էր քաղաքին դուռը: Ան պատուաւր դիրք գրաւած էր քաղաքին մէջ: Տարիներ առաջ, երբ Աքրահամն ու Ղովտը իրենց հօսերու եւ արջաներու շատութեան պատճառով պէտք էր իրարմէ քաֆնուէին, Աքրահամը Ղովտին առաջարկեց առաջինը ընտրել երկիրը: Ղովտը դաշտի քաղաքները նայեցաւ եւ իր վրանը Սոդոմի քով քացաւ: Շատ չ'անցած ան բնակեցաւ Սոդոմի մէջ եւ յայտնուեցաւ արեւելքի չորս քագաւորներու կողմէ գերեվարուած խումբին մէջ: Աքրահամի շնորհի փրկուելէն ետք ան կրկին վերադարձաւ Սոդոմ եւ քաղաքին մէջ անուանի մարդու անուն վաստակեց, դառնալով քաղաքի առաջնորդներէն մէկը՝ մարդ, ով նստած է քաղաքի դուռը՝ օգնելով կարգաւորելու բնակչութեան քաղաքական, դատական եւ առեւտրային գործերը: Ան այնքան սիրած էր քաղաքը, որ նոյնիսկ գերութեան տարուիլ չստիպեց իրեն լրելու այն ու վերադառնալու իր նախկին կեանքին:

Երբ իրեշտակները հասան Սոդոմի դարպասներու մօտ, Ղովտը ըրաւ այն, ինչ Աքրահամը ըրած էր այդ օրը վաղ առաւօտեան: Ան զանոնք դիմաւորելու ելաւ, ու իր երեսը մինչեւ գետին ծուելով խոնարհութիւն ըրաւ, խնդրելով որ այդ գիշեր իր տունը մնան: Ակիզը ընոնք մերժե-

ցին անոր առաջարկը՝ ըսելով, թէ ամբողջ գիշերը փողոցը կը կենան: Թէեւ ընդունեցին Ղովտի հիւրընկալութեան առաջարկը, սակայն անոնք նոյն օրը վաղ առաւտեան Աքրահամի հիւրընկալութեան պէս չինդունեցին այդ: Այնուամենայնիւ, նախքան գիշերը անկողին մտնելլ, բոլոր տարիքի Սոդոմի տղամարդիկ կանչեցին Ղովտին՝ պահանջելով սեռական յարաբերութիւն ունենալ իր հիւրերուն հետ:

Հաւանաբար Ղովտի՝ քաղաքային գործերուն մէջ ներգրաւուելու որշումը Սոդոմի հոգեւոր կեանքը բարեկաւելու փափազով էր: Եթի այդ գիշերը իր տան շուրջը անկարգութիւններ սկսեցան, ան Սոդոմացիներուն ըսաւ, թէ հիւրերուն իր յարկի շուրջին տակ առնելու պատճառը զանոնք չարիքէ փրկելն էր: Ան գիտէր, թէ ինչպիսին են Սոդոմի տղամարդիկ: Ի պատասխան՝ Սոդոմի տղամարդիկ պնդեցին, որ Ղովտը որպէս պանդուխտ եկած է իրենց քաղաք, իսկ հիմա իրեն դատաւորի տեղ կը դնէ: Անոնք մտադրութիւն շունէին իրենց պահուածքը փոխելու: Անոնց նպատակն շեղող ոչ մէկ արգելք չկար, եթէ հրեշտակները չմիջանտէին ու կորութեամբ չհարուածէին զանոնք: Բայց Ղովտն ինքն իրեն արհամարհուած զգաց: Ան քաղաքի տղամարդկանց առաջարկեց իր աղջիկները՝ փորձելով կանխել նոյնիսկ աւելի անբարոյական արարքը:

Ղովտի տան մօս կատարուած իրադարձութիւնները համոզիչ պատճառ էին հրեշտակներու հետազայ քայլերուն: Տէրը Աքրահամին ըսած էր, որ Ինքը պիտի իշնէ տեսնելու՝ թէ Իրեն եկած աղադակին պէս ըրի՞ն, թէ՞ ոչ: Հրեշտակները ուղարկուած էին այս հետախուզութիւնը կատարելու համար: Այդ պահին դատավճիռը հաստատ դարձաւ: Անոնք Ղովտին նախազգուշացուցին, որ իրեն հետ կապ ունեցող որեւէ մէկուն կրնայ քաղաքէն հեռացնել: Անոր փեսաներուն պատասխանը ծաղրող անհաւատութիւնն էր:

Իրավիճակը, որուն մէջ Ղովտը յայտնուեցաւ յիշեցում է մեզի, որ մեր անձերուն հարցնենք, թէ արդեօ՞ք մեր համայնքի գործունեութեան մէջ մենք Տիրոջը հաւատարիմ վկայութիւն ունինք: Իր փեսաներուն աչքին Ղովտը կատակ ըսող երեւցաւ: Ասիկա կ'ենթադրէ, թէ ան իր ապրելակերպի մէջ այնքան նման էր իր շրջապատի մարդկանց, որ եթք վըտանգի մասին նախազգուշացուց, անոնք իր խօսքերը լուրջի չ'առին:

## Աշխարհայնութեան խնդիրը

Մենք առաջարկեցինք այն միտքը, որ Ղովտը կը փափագէր Սոդոմ՝ ապրելու աւելի լաւ վայր դարձնելը: Բայց դժուար էր աշխարհայնութեան գայթակղութիւնն խուսափելը: Ղովտը հրաժարուեցաւ լեռներու խստակեաց կեանքէն՝ ընտրելով դաշտերու հաճելի արօտավայրերու կեանքը: Ան քաղաք մտաւ աւելի կարգաւորուած ու քարգաւած կեանքի մարմաջով: Աշխարհը գրաւեց զինք ու իր ընտանիքին: Իսկ եթէ հարցնելու ըլլանք, թէ ի՞նչ նկատի ունինք աշխարհ ըսելով, ապա պատասխանը հետեւեալն է. այն ամէնը, ինչ կը խանգարէ Աստուծոյ ընկերակցութիւնը եւ Անոր հնազանդիլը աշխարհային է: Աշխարհայնութեան որոշ հայեցակարգեր ինքնին կրնան սխալ չ'ըլլալ, բայց առոնք կը խանգարեն Աստուծոյ հետ մեր ընկերակցութիւնը եւ մեր հնազանդութիւնը:

Սոդոմին մօս գտնուիլը լուրջ խնդիր էր Ղովտի ընտանիքի համար: Հրեշտակները յորդորեցին զինք ընտանիքին հետ հնարաւորինս արագ հեռանալ այնտեղէն: Անոնք նոյնիսկ ստիպուած եղան բռնելու իր, կնոց եւ իր երկու դուստրերու ձեռքերը՝ զանոնք քաղաքէն դուրս հանելու եւ ճամբուն վրայ դնելու համար: Բայց անոնց սրտերը Սոդոմի մէջ էր եւ դժկամութեամբ հեռացան: Զանոնք դուրս հանելէն եռք հրեշտակներէն մէկը ըսաւ Ղովտին, որ պէտք է փախչի դէպի լեռները եւ դաշտին մէջ չկենայ: Ամէն ինչ պէտք է ետին բռնէին, նոյնիսկ ետին չպէտք է նայէին: Այնուամենայնի, Ղովտը խնդրեց, որ իրեն թոյլ տրուի դաշտին մէջ գտնուող փոքր քաղաք Սեգովը երթալ, քանի որ կը վախճանար, որ լեռան վրայ գուցէ չարիքի հանդիպահ: Ան հասկացողութիւն եւ հաւատք չունէր, որ Աստուած կրնայ զինք պաշտպանել, եթէ ինքը երթար այնտեղ, որտեղ Աստուած ընտրած էր իր համար: Կը տեսնենք. թէ որքան թերի է Ղովտի հաւատքն ու հասկացողութիւնը: Ան խնդրեց Սեգովը մնալ, սակայն շատ չանցած կը տեսնենք, որ այնտեղ մնալու վախցաւ եւ երկար ժամանակ բնակեցաւ լեռներու քարանձաւներու մէջ:

Ղովտի պատմութեան աւարտը չափազանց տխուր է: Նիթքական տեսանկիւնն ան ամէն քան կորսնցուց: Չնայած իրեն թոյլ տրուեցաւ Սեգովը երթալ, բայց ան վախցաւ այնտեղ ապրիլ: Սոդոմի մէջ տուն եւ հարստութիւն ունէր, բայց երբ Սեգովին հեռացաւ, ան ստիպուեցաւ

քարանձաւի մէջ բնակիլ: Սակայն քարոյական վճասը շատ աւելի ողբերգական էր, քան նիրականը: Անոր երկու դրաստրերը որոշեցին իրենց հօրը հարքեցնել, որպէսզի կարողանան օգտագործել իրեն յղանալու համար: Արդիւնքը եղաւ երկու ազգերու՝ մովարացիներու եւ ամսնացիներու սկիզբը, որոնք խրայէլացիներու համար մշտապէս մարմնի մէջ խրուած փուշի պէս էին:

## **Դատավճիռ**

Սոդոմի կործանումը հանդիսաւոր յիշեցում է, որ Աստուած արդար Դատաւոր է: Աքրահամը թերեւս անհանգստացած էր, թէ արդեօ՞ք բոլոր երկրի Դատաւորը արդարութիւն պիտի չ'ընէ, քայց ան իրավիճակին կը նայէր մարդկային սահմանափակ տեսանկիւնէն: Ան կը մտածէր իր եղբօր որդու մասին եւ կ'ուզէր ազատել զինք վերահաս կործանումէն: Աստուած Ղովտին փրկելու միջոց պատրաստեց, քայց երբ Ղովտի հարցը լուծուեցաւ, քաղաքի մեղքը պէտք էր պատժել, եւ Աստուած կատարեց Իր դատավճիռը: Ապագային Աստուած կրկին թափելու է Իր բարկութիւնը ապստամք մարդկութեան վրայ: Այդ գործնքացին մէջ բոլոր երկրի Դատաւորը անշուշտ արդարութեամբ պիտի գործէ:

## **Քաջալերանք**

Այնուամենայնիւ, կայ քաջալերական մէկ կարեւոր խօսք: Դաշտի քաղաքները կործանելէն առաջ Աքրահամը Աստումէտ աղաչեց Սոդոմի եւ Գոմորի մէջ ապրող արդարներու կեանքի համար: Կործանումի առաւօտը Աքրահամը բոլոր դաշտի երկրին վրայ նայելով՝ տեսաւ, որ ահա այն երկրէն հնոցի մուխի պէս մուխ կ'ելլէր: Քայց երբ Աստուած կործանեց այս քաղաքները, Ան Աքրահամը Իր միտքը բերաւ: Աքրահամի աղօթքը, հնարաւոր է, իր ուզած ձեւով չպատասխանուեցաւ, քայց Աստուած գիտէր Աքրահամի իրական մտահոգութիւնը եւ Ղովտին փրկեց աւերումէն: Այսօր նոյնպէս այդպէս է. «Նոյնակո Հոգին ալ օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն. քանզի ինչո՞ւ եւ ինչպէ՞ս աղօթելու ենք՝ չենք գիտեր. քայց ինքը՝ Հոգին՝ բարեխօս կ'ուլայ մեզի համար անբարբար հառաջանքներով» (Հոռվմայեցին 8:26):

Տնն Աքորմը

## **Օրը օրին**

**Հ**իմա որ Նոր Տարուան սեմին կը գտնուինք, արդեօք լսա՞ծ էք այդ ժամացոյցին մասին, որ ջղային խանգարում ունեցաւ եքք օր մը սկսաւ մտածել՝ թէ յառաջիկայ տարուան ընթացքին քանի անգամներ «թիք-թաք» ընելու է: Երկվայրկեանը երկու թիք հաշուելով, մէկ վայրկեանի մէջ 120 թիք ընելու էր, ժամը՝ 7,200 հատ, օրը՝ 172,800 եւ 1,209,600 թիքեր ամէն շաբաթ: Յանկարծ խեղճ ժամացոյցը լեղապատառ եղաւ, եքք անդրադարձաւ որ յաջորդ 12 ամիսներու ընթացքին մօտաւրապէս 63 միլիոն անգամներ թիքթաքելու է:

Որքան աւելի խորհեցաւ ասոր մասին, այդքան աւելի տագնապեցաւ: Վերջապէս այնքան շուարեցաւ, որ ջղային խանգարումով կքեցաւ:

Հոգեբոյժի մը քանալով իր սիրտը, ժամացոյցը գանգատեցաւ, որ զօրութիւն չունելու այդքան թիքթաքելու: Բժիշկը պատասխանելով հարցուց.

- Բայց քանի՞ թիք ընելու ես իւրաքանչիւր անգամ:

Ժամացոյցը ըսաւ.

- Մէկ:

- Լաւ, ուրեմն՝ պարզապէս մէկ անգամ թիք ըրէ, ու յաջորդին մասին մի՛ մտահոգուիր,- թելապրեց խելացի հոգեբոյժը:

- Վստահաբար այդպէս ընելով լաւ պիտի ընթանաս:

Ծիշտ այդպէս ըրաւ ժամացոյցը եւ անկէ յետոյ ուրախութեամբ թիքթաքեց շարունակ:

Նմանապէս, Աստուծոյ ապահնող զաւակներ, լման Տէրոջը վրայ ծգելու են իրենց հոգը: Ապագան կը վախցնէ՞ քեզ, կամ բեռդ շատ ծա՞նը կը քուի: Կը վախնա՞ս նոր տարիէն կամ յաջորդող 365 օրերուն պատահելիք դէպքերէն: Պարզապէս Տէրոջնէ զօրութիւն խնդրէ մէկ օրուան համար եւ ինչպէս Յիսուս կը պատուիրէ. «Վաղուան համար հոգ մի՛ ըներ»: Սիայն մէկ «թիք» ըրէ, կամ մէկ քայլ առ եւ վստահէ՛, որ Յիսուս քու ձեռքեղ պիտի բռնէ՛ կեանքիդ ճամբորդութեան մէջ ու յաջորդութեամբ պիտի աւարտես ընթացքը եւ ստանաս անթառամ պսակդ:

## Աստուածահաճոյ կանայք

**Ա**ստուածաշունչը լի է աստուածահաճոյ կանանց օրինակներով: Անոնցմէ կրնանք քուարկել՝ հաւատքի կին Սառային, համարձակ Մարիամին, Սամուելի աղօթող ու նուիրուած մայր Աննային, առաքինի Հռութին, Սարեփքայի հնազանդ այրիին, ով իր վերջին կերակուրը տուաւ Եղիա մարգարէին, խիզախ Եսթերին, երիտասարդ իրեա Մարիամին, որուն Աստուած ընտրեց մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի մայրը դառնալ, վերափոխուած Մարիամ Մագդաղենացիին, Տէր Յիսուսին հետևող կանանց, ովքեր ծառայեցին Իրեն եւ Իր աշակերտներուն՝ անոնց համար կերակուր պատրաստելով, անոնց հագուստները լուանալով, սէր ցուցաբերելով... գործարար Այծեմնիկին եւ պտղաբեր Պրիսկէին:

Այս կանանց իրար հետ կապող ընդհանուր գործօն կայ: Այդ իրենց ազգային պատկանելութիւնը, տարիքը, հարստութիւնը, առողջութիւնը, դիրքը, խելքը, ամուսնական կարգավիճակը կամ գեղեցկութիւնը չէ, այլ իրենց սիրած ու պաշտած Աստուածն է, որուն կը ճանչնային, կը հնազանդէին ու կը ծառայեին:

Համոզուած եմ, որ Մարկոս 12:41-44-ի աղքատ որբեւայրիի՝ Աստուածոյ հանդէա ցուցաբերած զոհաբերական նուիրատուութիւնէն ու խոնարհութիւնէն շատ բան ունինք սորվելու:

«Ե՛ Յիսուս գանձանակին քով նստած՝ կը նայէր թէ ժողովուրդը գանձանակին մէջ ինչպէս ստակ կը ծգէ: Շատ հարուստներ շատ բան ձգեցին: Աղքատ որբեւարի մըն ալ եկաւ ու երկու լուսայ ձգեց, որ նաքարակիտ մը կ'ընէ: Իր աշակերտները իրեն կանչելով՝ ըսաւ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեն ձեզի, թէ այս աղքատ որբեւարին գանձանակը ստակ ձգողներուն ամենէն աւելին ձգեց. վասն զի ամէնքը իրենց աւելցածէն ձգեցին, բայց ասիկա իր չքարութենէն՝ ունեցածին բոլորը ձըգեց՝ իր բոլոր ապրուստը» (Մարկոս 12:41-44):

«Յիսուս գանձանակին քով» նստաւ: Ան լաւ կը պատկերացներ կանանց գաւիթին մէջ գտնուող շեփորածեւ գանձանակներու մասին, որտեղ կը ծգէին տաճարի համար նուիրաբերուած ընծաները: «Հարուստները շատ բան ձգեցին... իրենց աւելցածէն»: «Աղքատ որբեւայ-

րին... իր շքաւորութենէն՝ ունեցածին բոլորը ձգեց՝ իր բոլոր ապրուստը»: Երկու լրտան օրավարձի մէկ երեսուներորդն էր: Զարմանալի չէ, որ Մարկոսը զինք կը նկարագրէ որպէս «աղքատ որբեայրի մը»:

Եթէ ինձի թոյլ տաք օգտագործել երեւակայութիւնս, ապա պատկերը հետեւալի է. թէ՛ հարուստներու եւ թէ՛ աղքատներու նուիրաբերած ընծաները շեփորի տեսրով զանձանակին մէջ բարձր ձայն կը հնչեցնէր: Տէր Յիսուսը զիտէր ձայնի տարբերութիւնը: Պատմոթեան համատեքստի մէջ, հարուստ մարդկանց ընծաներու ձայնը նման էր «ձայն տուող պղինձի», կամ հնչեցնող ծնծղաներու պէս», բայց որբեայրիի երկու լրտանի արձակած հնչինը ազդարարութեան փողի ձայնի նման հնչեց մեր Տերոց ականջներուն: Ան Իր աշակերտներուն բացատրեց, որ կնոշ ըրածը Աստուծոյ նուիրուած ըլլալու ու խոնարի սրտի ապացոյցն էր:

Թող որ մեր օրինեալ Փրկիչը լսէ մեր երկու լրտանի՝ զոհաբերութեան, խոնարհութեան եւ Աստուծոյ նուիրուածութեան արձակած ձայնը ու հաստատէ, թէ այն հաճելի է Իր ականջներուն:

Ո-ոպէրտ Հոլոռու

Եթէ կը փափագիք ունենալ  
ACM-ի արեւելահայերէն լեզուուվ  
2020 թ.-ի օրացոյց, ապա կրնաք  
պատուիրել այն [www.acmaust.org](http://www.acmaust.org)

կայրէջի միջոցով: Արժէքի  
մէջ ներառուած են փոստային  
ծախսերը. ԱՄՆ-ի համար՝ 15.00  
ԱՄՆ տոլար, իսկ Աստրալիոյ  
համար՝ 12.00 ԱՄՆ տոլար:

Կը խնդրենք

info@acmaust.org հասցէին  
ուղարկել ձեր ելեկտրոնային  
փոստի հասցէն՝ նշելով ձեր  
ամրողական անունը, հասցէն եւ  
պատուէրի քանակը:



Եղիսաբէթին 4:25

Կրկ	Երկ	Երե	Չր	Դնգ	Ուր	Երբ
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	30	31				

2020

Հայ քրիստոնական ժամանակաշրջան  
[www.acmaust.org](http://www.acmaust.org)